

ԲՆԱԿԻՉՆԵՐ.



Սիսիանու ոստիկանական շրջանի բնակչութիւնը կազմում են հայերը, թաթարները և ռուս աղանդաւոր՝ մալականները:

Հայերի փոքրագոյն մասը բնիկներ են, և բնակում են Սիսիանու Բռնակոթ, Ալխաթեան և Բնուռնիս, ինչպէս և Լորաձորի Շնաթաղ, Լոր և Դարաբաս գիւղերում: Բնիկ են համարւում նաև տաթևացիները, իսկ միւս, մեծագոյն մասը գաղթականներ են, որ գլխաւորապէս եկել են Պարսկաստանից, 1828—29 թուի ռուս-պարսկական պատերազմների միջոցին: Սրանցից Գերմալիները բռնել են Սլելու, Անգեղուկոթ, Ղուշի-թաղաքենտ և Ուզ, Մազրա, Բալաք, խոյեցիները՝ Շաղատ, Լճէն, սալմաստցիները՝ Ղարաքիլիսա. վերջին ժամանակներս սրանցից մի մասը տեղափոխուեց Ղալաջըղ և նրան վերակոչեց՝ երկրորդ կամ նոր Ղարաքիլիսա: Պարզ է, որ այս գաղթական ժողովուրդները, պահելով իրենց նախնիին մի ավայրերի առանձնալատկութիւնները՝ տարբերւում են միմեանցից թէ՛ բարբառով, թէ՛ սովորութիւններով և թէ՛ բնաւորութեամբ: Մեր ներկայ հետազոտութեան մէջ մենք միայն նրանց գիւղերը նկարագրեցինք, որպէսզի տեղագրական բաժինը փոքր ի շատէ լրիւ կարողանայինք ներկայացնել, այն ինչ միւս, զուտ ազգագրական կէտերում, մենք նրանց բոլորովին անուշագիր թողինք, հետազոտելով միմիայն բնիկ ժողովրդին, որպէսզի ազգագրական տեսակէտից սխալներ արած չլինէինք և տարբեր սովորութիւններ միմեանց չխառնէինք: Այնպէս որ մեր բոլոր ազգագրական տեղեկութիւնները վերաբերում են Բռնակոթ, Ալխաթեան,

Բնունիս, Շնաթաղ, Լոր և Դարաբաս գիւղերին, և Վիսիանի ժողովուրդը՝ ասելով՝ մենք կամեցել ենք յատկապէս այս գիւղերի բնակիչները հասկանալ: Տաթևացիների վրայ մենք պակաս ուշադրութիւն ենք դարձրել, որովհետև վանքի ազդեցութեամբ շատ բան փոխուել է նրանց մէջ:

Արդ՝ մասնաւորելով մեր խօսքը յատկապէս վերոյիշեալ գիւղերի հայ բնակիչների մասին՝ կասենք, որ սրանք ընդհանրապէս միջահասակ, առողջակազմ և բաւական գեղեցիկ մարդիկ են: Սրանց բնաւորութեան յատկանիշ կողմը անչափ կոպտութիւնն է, որ դարաբաղցու կոպտութիւնիցն էլ անցնում է: Վերին աստիճանի տգիտութիւնն էլ միանում է այդ կոպտութեան հետ, և անտանելի դարձնում նրան՝ մանաւանդ երբ Բագուի ազդեցութեամբ կեղծ լուսաւորութիւնը գալիս է լրացնելու պակասը: Կասկածատուութիւնն ու անփոտահութիւնը նոյնպէս բաւական յատկանիշ գծեր են այս ժողովրդի բնաւորութեան:

Բայց այս բոլորը հետևանք է այս ժողովուրդների անցեալ կեանքի. սրանք այնքան անգամ ենթարկուել են թըշնամիների հալածանքներին, ճնշման, այնքան անգամ կոպտուել, կոտորուել են, որ չէին կարող վերոյիշեալ բնաւորութիւնը չստանալ *):

Սակայն այս բացասական կողմերի հետ այս գիւղացիները ունին համակրելի կողմեր ևս. այն՝ որ նրանք բաւական հիւրասէր են, թէև այս ևս պէտք է ասել, որ սրանց հիւրասիրութիւնն էլ չէ կարող հաւասարուել շիրակեցու կամ նայն իսկ արալքալաքցու հիւրասիրութեան: Վերին աստիճանի աշխատասիրութիւնն ու տոկունութիւնը մի ընդհանուր, գրեթէ բոլոր հայ գիւղացիների համար յատուկ գիծ լինելով՝ մի առանձին արժանաւորութիւն չեն աւելացնում սրանց վրայ: Բայց աշխատութեան ու տոկունութեան կողմից աւելի նշանաւոր է հայ գեղջիկուհին, որ տղամար-

*) Зелинский. Исследование экономического быта государственных крестьянъ въ Закавказскомъ уѣздѣ. Կր. 22.

դից եթէ ոչ աւելի՝ գէթ նրա հաւասար աշխատում է։ Նա ոչ միայն կառավարում է տունը, կատարում տնային տնտեսական քննարկ, այլև օգնում է տղամարդուն գաշտային աշխատանքների մէջ և նրա հետ միասին նոյն իսկ հունձ անում։ Այս ծանր և մշտատև աշխատանքները շատ շուտով խլում են նրանից կանացի քնքշութիւնն ու թարմութիւնը։ Սրանք թէև բաւականաչափ գեղեցիկ են, բայց չեն կարող մըցել Զանգեզուրի գաւառի ոստիկանութեան և մասնաւորապէս Խնձորեսկի կանանց հետ, որոնք անհամեմատ գեղեցիկ են։ Սակայն սիսիացիները բարոյականութեամբ բարձր են այս վերջիններից, որոնք մեծ մասամբ Բագուի և մասամբ Գորիս քաղաքի ազգեցութեամբ, բաւական շեղուած են բարոյականութեան ճանապարհից։

Սիսիանու թաթարները Միջին Ասիայի մոնղոլական գանազան ցեղերի և առաւելապէս Սելջուկների մնացորդներ են, որոնք լետոյ խառնուել են Պարսկաստանից եկողների և արաբական ցեղերի հետ *)։ Առաջները այս թաթարները բաժանուում էին բազմաթիւ, առանձին-առանձին ցեղերի և հովուական կեանք էին վարում. բայց ժամանակի ընթացքում նրանց սերունդները այնպէս խառնուեցան միմեանց հետ, որ շատերը կորցրին իրենց ցեղական կազմակերպութիւնը և մահմեդականութեան ազգեցութեամբ սկսեցին մի ընդհանուր, մուսուլման անունով կոչուել։ Այժմ միևնոյն ցեղի անգամների մէջ չկայ այն սերտ կապը, որ նկատուում է հովուական ցեղերի մէջ, և նախկին ցեղական խիստ բաժանումը արդէն վերացել է։

Միայն մի քանի հասարակութիւններ մասամբ պահպանել են իրենց ցեղական կազմակերպութիւնը, այն էլ շնորհիւ այն հանգամանքի, որ աշխարհագիր անելիս (ընտանեկան ցուցակ *посемейный список*) կազմելիս սրանց ոչ թէ առանձին-առանձին, որպէս այս կամ այն գիւղի բնակիչ են գրել, այլ որպէս մի ամբողջ ցեղ, որ ապրում է տարբեր

*) Զեւենսկի, անդ։

գիւղերում և ձմերանոցներում, որոնք միմեանցից երբեմն մինչև 100 վերստ հեռավորութեան վրայ և մինչև անգամ տարրեր գաւառներում են գտնուում: Այսպէս Սոֆուլի ցեղը ապրում է 19 գիւղերում, որոնցից 5 Սիսիանումն է, 10 Ղափանում, իսկ մնացածները Ջեբրայիլի գաւառում: Խոջա-Մուսաղլի ցեղը ապրում է 3 ձմերանոցներում, որոնցից մինը Սիսիանու, իսկ երկուսը Ղափանի ոստիկանական շրջանումն են:

Այս բոլոր թաթարները մեծ մասամբ շիաներ են. սիւն-նիներ շատ քիչ կան:

Թաթարները վայրենական բարքեր ունին, անսանձելի, քաջ և ճարպիկ են: Քաղաքավարութիւն, արտաքին բարեպաշտութիւն, մեծերին պատուելը կազմում են նրանց բնավորութեան առանձնատկութիւնները. նրանք ատում են ոչ-մահմեդական մարդկանց, սակայն ոչ մի բանով, նոյն իսկ ակնարկով չեն ցոյց տալիս իրենց ատելութիւնը: Նրանք ստրուկ են իշխանութեան առաջ, բայց շատ գոռոզ են իրենցից ստորի վերաբերմամբ: Նախապաշարմունքը, հետաքրքրութիւնը, կասկածոտութիւնը, վրէժխնդրութիւնը նրանց բոլորի յատուկ գծերն են:

Թափառական կեանքը նրանց սովորեցրել է անհոգութիւն, պարտաւորութիւն և ծուլութիւն, և այս յատկութիւնները այնպէս խիստ են արմատացել նրանց մէջ, որ նրանք պատրաստ են մի քանի օր շարունակ քաղցած մնալ՝ քան թէ աշխատել: Սրանից էլ յառաջանում է մշտապես չքաւորութիւնը, որի հետեւանքը լինում է գողութիւն և աւազակութիւն, որ շատ սովորական երևոյթ է այս կողմի թաթարների մէջ:

Մահմեդական կրօնը մահացու մեղք է համարում չպաշտպանել մահմեդականին ոչ-մահմեդականի առաջ. հասարակական կարծիքը սաստիկ դատապարտում է այն մահմեդականին, որ ոչ-մահմեդական իշխանութեան կը մատնէ մահմեդական յոնցաւորին. այս պատճառով էլ այս թաթար-

ները շարունակ թագցնում են թուրք աւազակներին ու մարգասպաններին, ի նպաստ նրանց սուտ երգում են տալիս և առհասարակ ամեն կերպ օգնում են նրանց: Այս է պատճառը, որ Զանգեզուրի գաւառը լի է աւազակութիւններով: Սակայն վերջին տարիս, երբ գաւառապետ նշանակուեց մի թուրք՝ կարճ միջոցում աւազակութիւնը բաւական պակասեց, որովհետեւ կրօնական համոզմունքը այլ ևս չէ արգելում լանցաւորին սրտ ձեռք մատնելու:

Մալաղանները, որ բնակում են միմիայն Բաղարքենտ գիւղում և ընդամենը 81 տուն են՝ գաղթել են Շուշու Պալուճայ գիւղից 1877 թուին: Սրանք խաղաղ աշխատասէր և կրօնամոլ ժողովուրդ են: Թէև երկրի ցուրտ լինելու պատճառով երկրագործութեամբ շատ չեն պարասում, սակայն ընդարձակ արօտատեղիներ ունենալով՝ բազմաթիւ անասուններ են պահում և բաւական հարուստ են:

